ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1 ☎/0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ_____

« _____» _____ 2021թ.

Հանրային հեռուստաընկերության
լրագրող Իրինա Մկրտչյանին
iri-mkrtchyan@yandex.ru

Ձեր 30.07.2021 թվականի հարցմանը.

Հարգելի Իրինա Մկրտչյան

Լոռու մարզում համայնքների թիվը 2021թվականի դրությամբ 56-ն է: Մարզի 5 տարածաշրջաններից 3-ը (Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) խոշորացվել են:

Մարզի 57 բնակավայրի ջրամատակարարումը սպասարկվում է համայնքների կողմից:

Նշված համայնքներից խմելու ջրի ծայրահեղ վատ վիճակ է **Բազում** համայնքում: 444 տնտեսություն ունեցող համայնքը չունի արտաքին և ներքին ջրամատակարարման համակարգ: Խմելու ջուրը բացակայում է: Բնակիչների մի մասը կենցաղային խնդիրները հոգում է՝ օգտվելով գետի ջրից, մի քանի տնտեսություն, համատեղ՝ սեփական միջոցներով սարից խողովակներով ջուր են հասցրել իրենց առանձնատներ:

Մարզի մի շարք համայնքներում առկա է շուրջօրյա ջրամատակարարում, որոշ համայնքներում ոռոգման համակարգերի բացակայության պատճառով խմելու ջրի քանակը ամռան մի քանի ամիսներին նվազում է, այդ ամիսներին գործում է ջրամատակարարման սեզոնային անկանոն գրաֆիկ, ինչի պատճառով բնակիչներից գրավոր և բանավոր բողոքներ են ստացվում:

Ջրամատակարարման սեփական համակարգ ունեցող համայնքները հիմնականում խմելու ջրի պաշարները ստանում են սարերի բնական աղբյուրներից: Ամեն տարի, հաշվի առնելով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված առաջնահերթությունները, պետական բյուջեի ֆինանսավորմամբ, բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ, համայնքային բյուջեով և ինչու չէ՝ բնակիչների սեփական ներդրումներով բարելավվում են խմելու ջրամատակարարման համակարգերը:

Սուբվենցիոն ծրագրով մարզում իրականացվել և իրականացվում են ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ՝

կատ.Ն.Խաչատրյան
հեռ. /0322/ 2-31-02

2019թ. - Թումանյան (Լորուտ բնակավայր), Ախթալա (Մեծ և փոքր Այրում բնակավայր), Լոռի Բերդ (Լեջան բնակավայր), Մարգահովիտ և Սարահարթ համայնքներում:

2020թ. - Լոռի Բերդ (Լեջան, Բովաձոր. Կողես, Յաղդան բնակ.), Թումանյան (Շամուտ բնակ.), Մեծավան (Միխայլովկա բնակ.), Եղեգնուտ, Դեբեդ, Լեռնանցք և Ծաղկաբեր համայնքներում:

2021թ. - Լոռի Բերդ (Լեջան, Սվերդլով, Բովաձոր. Կողես, Յաղդան բնակ.), Տաշիր (Լեռնահովիտ, Մեծավան, Ձյունաշող բնակ.), Ալավերդի, Շնող, Գեղասար, Լուսաղբյուր, Հարթագյուղ, Նոր Խաչակապ, Շենավան, Սարահարթ, Սարամեջ համայնքներում:

Հարգանքով՝ Արամ Խաչատրյան

կատ.Ն.Խաչատրյան
հեռ. /0322/ 2-31-02